ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՆԻՍՏԻ

2025 թվականի մարտի 4-ին Արմավիրի համայնքապետարանում տեղի ունեցավ Արմավիր համայնքի ղեկավարի 2025 թվականի հունվարի 20-ի թիվ 0129-Ա որոշմամբ ստեղծված կառավարման հանձնաժողովի թիվ 2 նիստը՝ Մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ:

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ Ֆ. Պետրոսյանը, նախագահի տեղակալ Ռ. Մանուկյանը, անդամներ՝ Հ. Դոլինյանը, Ս. Իսախանյանը, Ա. Հարությունյանը, Ն. Առաքելյանը, Է. Բաղդասարյանը, քարտուղար Ն. Խաչատրյանը:

Օրակարգում՝

1.Արմավիր համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի շրջանակներում առաջարկների քվեարկության արդյունքների ամփոփում:

Լսեցին.

Հանձնաժողովի նախագահ Ֆ. Պետրոսյանը ներկայացրեց, որ, մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցի համաձայն, առաջարկների քվեարկության փուլն ավարտվել է:

Հանձնաժողովի քարտուղար Նոյեմի Խաչատրյանը ներկայացրեց առաջարկների քվեարկության արդյունքները՝ առավելագույն թվից նվազման կարգով.

1.Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոցի 16/6 հասցեում 20Х40 տիպի արհեստական խոտածածկով ֆուտբոլի դաշտի կառուցում – 830 ձայն:

2.Արմավիր համյանքի Լուկաշին գյուղի կենտրոնական զբոսայգում 20Х40 տիպի արհեստական խոտածածկով ֆուտբոլի դաշտի կառուցում – 744 ձայն:

3.Արմավիր համյանքի Նորավան գյուղի 5-րդ փողոց 44 հասցեում 20Х40 տիպի արհեստական խոտածածկով ֆուտբոլի դաշտի կառուցում – 703 ձայն:

Այնուհետև հանձնաժողովի քարտուղարը ներկայացրեց ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներին համապատասխան այն առաջարկ-նախագծերը, որոնց օգտին քվեարկել են քվեարկությանը մասնակցելու իրավունք ունեցողների առնվազն մեկ տոկոսը:

1.Արմավիր քաղաքի Բաղրամյան փողոցի 16/6 հասցեում 20X40 տիպի արհեստական խոտածածկով ֆուտբոլի դաշտի կառուցում – 830 ձայն:

2.Արմավիր համայնքի Լուկաշին գյուղի կենտրոնական զբոսայգում 20X40 տիպի արհեստական խոտածածկով ֆուտբոլի դաշտի կառուցում – 744 ձայն:

3.Արմավիր համյանքի Նորավան գյուղի 5-րդ փողոց 44 հասցեում 20X40 տիպի արհեստական խոտածածկով ֆուտբոլի դաշտի կառուցում – 703 ձայն:

Հանձնաժողովը որոշեց.

Առաջարկել Արմավիր համայնքի ղեկավար Վարշամ Սարգսյանին վերոնշյալ երեք առաջարկ-նախագծերի հիման վրա կազմել սուբվենցիոն հայտեր և ներկայացնել ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ համաձայն ՀՀ կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշմամբ հաստատված կարգի:

Հանձնաժողովի նախագահ Ֆ. Պետրոսյան

Քարտուղար Ն. Խաչատրյան

ՀՀ, Արմավիրի մարզ, Արմավիր համայնք
04.03.2025թ.